

Նոյեմբերի 14-ին. «Վախճանում է Խորէն արքեպիսկոպոսունը» (Գալֆայեան): Դուցէ և կազմողը սրանց տարբեր մարդիկ է համարել, քանի որ առաջինը զեղուադէտ, բանաստեղծ և մատենագիր՝ է՝ իսկ երկրորդը միայն «Գալֆայեան»:

Փոքը օրացոյցն աւելի ճոխ է ժողովրդի համար գործնական և օգտակար տեղեկութիւններով. գրական բաժինը կարդացւում է հետաքրքրութեամբ:

13. ՑՈՂԱԿԻՄ ՍՈԼՈՎԵԱՆ. Հարազատ գծեր, Առաջին պրակ, Ա. Պետերբուրգ 1903 36. էջ գ. 15 կտս.

Հարազատ գծեր անբովանդակ վերնագիրը կրող այս գրքոյկի մէջ երկու զրոյց կայ ամփոփուած. 1) Զենք ուզում (պատկեր) և 2) Հին երզ (զատկական զրոյց): Նրկուսն էլ՝ թէ պատկերը և թէ զրոյցը, բացի գատողութիւնների կուտակութիւնց ոչինչ չեն պարունակում. հեղինակը գեղարուեստօրէն զրելու ընդունակութիւն չէ ցոյց տալիս; չունի երևակայական թոփք և զուրկ է նկարագրելու շնորհքից:

«Զենք ուզումը» քահանաներին ուոճիկ նշանակելու խընդիրն է արծարծում իբրև թէ. վիճակային առաջնորդի կարգադրութեամբ քահանաները ծրագիր են կազմում և սրբազնն էլ այդ ծրագիրը առաջարկում է ծխականների ժողովին: Ժողովը չէ ուզում այդ նորաձևութիւնն ընդունել — և նախագահ սրբազնն էլ ինդիրը վերցնում է մէջ տեղից. ահա բոլորը:

«Հին երզ»-ումնկարագրուած է, կամաւելի լաւ է ասել պատմուած է մի աղքատ աստիճանաւորի վիճակը, որի ուոճիկը չէ բաւականում ընտանեկան ծախսերի համար և աստիճանաւորը Զատկի օրը քահանային ու տիրացուին տալու փող չունենալով՝ ստիպւում է փակել իր տան դուռը,

Նրկուսն էր կարող էին մի մի լրագրական յօդուածի կամ թղթակցութեան նիւթ լինել միայն. վիպական զրուածքի հետքն անգամ չկայ սրանց մէջ: Պ. Գեղամ Ավտանդիլեանցը (հրատարակիչը) կարող էր հանգիստ խղճով հրաժարուել այս գրքոյկը տպագրելու պատուից: